



**MILLENNIUM CHALLENGE  
ACCOUNT - ARMENIA**  
STATE NON-COMMERCIAL ORGANIZATION

Մամլո հաղորդագրություն

16-ր սեպտեմբերի, 2009թ

**ԱՄՆ Դեսպանը, ՀՀ փոխվարչապետը և ՀՀ գյուղատնտեսության նախարարը այցելեցին ՀՄՀ-  
Հայաստան ծրագրի տեղամասեր Կոտայքի և Արագածոտնի մարզերում**

Կոտայք/Արագածոտն, Հայաստան - 2009թ. սեպտեմբերի 16-ին ԱՄՆ դեսպան Մարի Լ. Յովանովիչը, ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը, ՀՀ գյուղատնտեսության նախարար Գերասիմ Ալավերդյանը, Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը, Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալոյանը, ինչպես նաև ՀՀ և ԱՄՆ պատվիրակության այլ անդամներ համատեղ աշխատանքային այցելություն ունեցան ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում վերականգնվող Արզնի-Շամիրամ մայր ջրանցքի վերանորոգված տեղամասը: Ծրագրային տեղամասը իրենից ներկայացնում է փորձարկային հատված, որի վերականգնման արդյունքում հետագայում կիրառելու նպատակով վեր է հանվել նախագծային և շինարարական լավագույն փորձը: Երկու մարզերի ավելի քան 30 համայնքներ և 60,000 բնակիչ կօգտվեն բարելավված ջրանցքից:

Արզնի-Շամիրամ ջրանցքը Հայաստանի մայր ջրանցքների համակարգի այն վեց ջրանցքներից մեկն է, որը վերականգնվելու է ՀՄՀ-Հայաստանի Ռոզվոդ Գյուղատնտեսություն ենթածրագրի շրջանակներում: Վերականգնման և շինարարական աշխատանքների պայմանագիրը կնքվել է ֆրանսիական “SADE” և հայկական “ՇՄԸ-23”(Վայոց Ձոր, ենթակապալառու) կոնսորցիումի հետ: Վերականգնման և շինարարական աշխատանքները կենտրոնացված են ջրանցքի այն հատվածների և ջրի կառավարման այն կառուցվածքների վրա, որոնք գտնվում են վատ կամ շատ վատ վիճակում:

Պատվիրակությունը շարունակեց իր այցը դեպի Արագածոտնի մարզի Կարբի համայնք՝ ծանոթանալու ջրի ներտնտեսային կառավարման դասընթացների մասնակից ֆերմերի տնտեսությանը, որտեղ վերջինս կիրառում է գյուղատնտեսական նոր տեխնոլոգիաները: ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է կաթիլային ոռոգման համակարգի տեղադրումը, որը հնարավորություն է տվել ֆերմերին անցնելու ավելի արդյունավետ և շահութաբեր ոռոգմանը:

Տվյալ տնտեսությունը ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող այն բազմաթիվ ցուցադրական տնտեսություններից մեկն է, որտեղ տեղակայված են ծրագրի շրջանակներում ձեռք բերված տեխնիկական սարքավորումները: Այցելությունները նման ցուցադրական տեղամասեր լրացնում են ուսուցման դասընթացներում ձեռք բերված գիտելիքները՝ ֆերմերներին հնարավորություն տալով տեսնել, թե ինչպես են գործնականում կիրառվում ուսուցանված նոր մոտեցումները:

Մինչ օրս ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ռոզվոդ գյուղատնտեսության ենթածրագրի շրջանակներում Հայաստանի մոտ 300 համայնքների ավելի քան 30,000 ֆերմեր ուսուցանվել են ջրի կառավարման տեխնոլոգիաների և բարձրարժեք գյուղատնտեսության թեմաներով: Կոտայքի և Արագածոտնի մարզերի 60 համայնքներում ուսուցանված ֆերմերների թիվը կազմում է մոտ 5000:

Այս միջոցառման և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել՝

[www.mca.am](http://www.mca.am)

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: